Գործազու՞րկ եք:



Կորցրե՞լ եք աշխատանքը, կամ արդյո՞ք կրձատվել է աշխատանքի ժամաքանակը։

Ներկայացրե[′]ք և կառավարեք Ձեր Գործազրկության ապահովագրության (ՍI) <u>հայցը՝ օգտվելով ՍI</u> Online^{sм}-ից։

www.edd.ca.gov/UI_Online

Մուտք գործեք **UI Online,** որպեսզի՝

- հայց ներկայացնեք կամ վերաբացեք
- հաստատեք իրավունակությունը նպաստների համար և ավելի արագ վճարվեք
- ստանաք հայցի և վճարման վերաբերյալ ամենաթարմ տեղեկությունները
- ստանաք կարևոր ծանուցումներ, օրինակ՝ հիշեցումներ նպաստների համար իրավունակությունը հաստատելու մասին
- դիտեք առերես և հեռախոսային ընդունելությունները
- հարցեր տաք
- և ավելին։

UI Online Mobile[™] ծառայություն է տրամադրում սմարթֆոն և պլանշետ օգտագործողներին։ Կարող եք UI Online-ի միջոցով նոր հայց ներկայացնել ստորև նշված ժամերի ընթացքում՝

Երկուշաբթի	4 a.m 10 p.m.
Երեքշաբթի – ուրբաթ	2 a.m 10 p.m.
Շաբաթ	2 a.m 8 p.m.
Կիրակի	5 a.m 8:30 p.m.

Ձեր հայցը ներկայացնելուց հետո կարող եք ցանկացած ժամանակ մուտք գործել UI Online համակարգ՝ հայցը դիտելու և կառավարելու համար։

UI Online հաշիվ բացելու վերաբերյալ տեղեկությունները՝ հակառակ կողմում։

Uhnt pmjnon:

Ստեղծեք Benefit Programs Online համակարգի մուտքի տվյալներ

Եթե արդեն ունեք Benefit Programs Online համակարգի մուտքի տվյալներ, կարող եք բաց թողնել այս քայլը։

- Այցելեք www.edd.ca.gov/BPO և ընտրեք Register (Գրանցվել)։
- Շարունակելու համար ընդունեք դրույթները և պայմանները։
- Տրամադրեք անձնական էլեկտրոնային փոստի հասցե, որը միայն Դուք եք օգտագործելու, ևստեղծեք գաղտնաբառ։
- Ընտրեք անձնական պատկեր և մակագիր։ Ընտրեք չորս գաղտնի հարց և պատասխանեթ դրանց։
- Ստուգեք Ձեր էլ․փոստր։ Էլեկտրոնալին նամակը ստանալուց հետո 48 ժամվա ընթացքում ընտրեք եզակի հղումը, որպեսզի ավարտեք գործընթացը, հակառակ դեպքում հարկ կլինի ամեն ինչ նորից սկսել։

Կարևոր է. Ստուգեք թափոնի կամ լցոնի պանակը, եթե մուտքի արկղում չտեսնեք այս հաղորդագրությունը:

Ներկայացրեք Ձեր ՍI հայցը

Սկսելու համար մտեք Benefit Programs Online և ընտրեք **UI Online**:

- Ընտրեք File a Claim (Ներկայացնեյ հայց):
- Կարդացեք UI Claim Filing (UI Հայցի ներկայացման մասին) հրահանգները։ Շարունակելու համար ընտրեք Next (Հաջորդ)։
- Տրամադրեք Ձեր մասին ընդհանուր տեղեկություններ, վերջին գործատուի տվյալները և տեղեկություններ աշխատանքային գործունեության մասին։
- Summary Page (Ափոփագիր Էջում) վերանալեք Ձեր տրամադրած տեղեկությունները, այնուհետև ընտրեք Submit (Ներկայացնել)։

Ծանոթություն. Հայզը ներկայացնելուց հետո կցուցադրվի հաստատման էջ։ Կարող եք հաստատման համարը պահել ձեր փաստաթղթերի հետ։

Գրանցվեք UI Online համակարգում՝ նպաստներ ստանալու ձեր իրավունակությունը հաստատելու համար

Մտեք Benefit Programs Online և ընտրեք UI Online, որպեսզի սկսեք գրանցումը։ Հարկավոր է տրամադրել հետևյալ տեղեկությունները՝

- անունը և ազգանունը, ինչպես նշված է Ձեր հայցում
- ծննդյան թվականը
- սոցիալական ապահովության քարտի համարը
- EDD-ի Հաձախորդի հաշվեհամարը:*

*Եթե Դուք ՍI համակարգի նոր հաՃախորդ եք, հայցը ներկայացնելուց հետո նկատի ունեցեք 10 աշխատանքային օր, որպեսզի փոստով ստանաք EDD-ի Հաձախորդի հաշվեհամարը։

EDD-ն հավասար հնարավորություններ ընձեռող գործատու-ծրագիր է։ Ըստ պահանջի՝ օժանդակ օգնություն և ծառայություններ են հասանելի հաշմանդամ անհատներին։







